ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 7 հուլիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացի Գագիկ Գեղամյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Քաղաքացի Գագիկ Գեղամյանը 16.06.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի և 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

Դիմողը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ամբողջությամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ բացակայում են անձին ազատությունից զրկելու՝ օրենքով սահմանված դեպքն ու կարգը:

Դիմողի կարծիքով՝ «Միայն այն փաստը, որ գործն ուղարկվել է դատարան, չի կարող հիմք հանդիսանալ անձի նկատմամբ ընտրված կալանքի ժամկետի ընթացքի կասեցման համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի վերաբերյալ դիմողը նշում է, որ սույն հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ դատարանը՝ քրեական գործը վարույթ ընդունելու հետ մեկտեղ, նույն օրը պարտավոր է քննել նաև մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, իսկ ընտրված լինելու դեպքում՝ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կամայական մեկնաբանություն տալով վիճարկվող նորմին՝ դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից: Բացի դրանից, դատարանը խախտել է նաև ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, քանի որ նշված որոշումը չի հանձնել վերջինիս պաշտպանին: Ավելին, անգամ հանձնելու դեպքում՝ մարդու պաշտպանության իրավունքը, միևնույն է, խախտվում է, քանի որ օրենսդիրը չի նախատեսել այդ որոշման բողոքարկման կարգ:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, քանի որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ինչ վերաբերում է վիճարկվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածին, ապա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է միջանկյալ դատական ակտով՝ «Մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասին» 08.05.2012թ. որոշմամբ: Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ՝ «…օրենսդիրը չի նախատեսել այդ որոշման բողոքարկման կարգ», նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «**Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը**» վերտառությամբ 376.1-րդ հոդվածը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա ակտերի թվում նշում է նաև՝ 4) **առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու** … որոշումները: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «**Խափանման միջոցների բողոքարկումը**» վերտառությամբ 150-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է.

...

2. Մինչդատական վարույթում խափանման միջոց կիրառելու կամ այն մերժելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամկետը երկարացնելու կամ մերժելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան:

Վերոշարադրյալից բխում է, որ դիմողը չի փորձել վիճարկել վերը նշված որոշումը, նշելով որ այն բողոքարկման ենթակա չէ:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ՀՀ սահմանադրական դատարանում կարող է վիճարկել օրենքի սահմանադրականությունը միայն դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց հետո:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, նշելով, որ դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը ... որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տվյալ դեպքում դիմողն իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով և 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գագիկ Գեղամյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

7 հուլիսի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/2-9